

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝ ք. Գավառ
Տարածաշրջանները՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան և Վարդենիս
Քաղաքները՝ Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս

ՀՀ Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի արևելքում՝ շրջապատելով Սևանա լիճը:

Մարզը հյուսիսից **սահմանակից է** ՀՀ Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ **պետական սահմանով, սահմանակից է** Ադրբեջանին, հարավից՝ ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավ-արևմուտքից՝ ՀՀ Արարատի մարզին և արևմուտքից՝ ՀՀ Կոտայքի մարզին:

Տարածքը	5348 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	18 %
Քաղաքային համայնքներ	5
Գյուղական համայնքներ	87
Քաղաքներ	5
Գյուղեր	93
Բնակչության թվաքանակը 2007թ. հունվարի 1-ի դրությամբ	239.6 հազ. մարդ
քաղաքային	79.6 հազ. մարդ
գյուղական	160.0 հազ. մարդ
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	33.2 %
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2006թ.	7.4 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր (2006թ. հուլիսի 1-ի դրությամբ)	352800 հա
այդ թվում՝ վարելահողեր	80900 հա

Մարզի ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 115 կմ, արևմուտքից արևելք՝ 85 կմ, ամենախոր իջվածքը Գետիկ գետի կիրճն է (Ձորավանք գյուղ, 1325 մ), ամենաբարձր կետը՝ Աժդահակ լեռան գագաթը (3598 մ):

Բարձր լեռներն են Սպիտակասարը (3555 մ), Վարդենիսը (3522 մ), Գեղասարը (3446 մ): Ամենաերկար գետերն են Արգիճին (51 կմ), Գավառագետը (47 կմ) և Մասրիկը (45 կմ):

Ամենամեծ լիճը **Սևանա լիճն** է (1260 կմ², բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1898մ), համեմատաբար փոքր լճերից են Աժդահակի և Աղմաղանի խառնարանային լճերը՝ մինչև 50 մ տրամագծով և 15 մ խորությամբ:

Մարզի տարածքով անցնում է Երևան-Սևան-Դիլիջան հանրապետական նշանակության մայրուղին: Գործում է Սելիմի լեռնանցքով անցնող «Հարավ-Հյուսիս» մայրուղին:

ՀՀ **Գեղարքունիքի մարզում** է գտնվում **Սևանա լիճը**, որը ոչ միայն մարզի, այլ նաև հանրապետության համար ունի առանձնահատուկ կարևորություն: Այն Հարավային Կովկասի քաղցրահամ ջրերի ամենամեծ ավազանն է: Լիճն էական ազդեցություն ունի ողջ մարզի ոչ միայն բնապահպանական հավասարակշռության, այլ նաև տնտեսության վրա:

Մարզի տարածքում է գտնվում «**Սևան**» **ազգային պարկը** (կազմավորվել է 1978թ.): Այն զբաղեցնում է Սևանի միջլեռնային գոգավորության հատակը կազմող Սևանա լճի և դրա հատակից ազատված տարածքները: Մակերեսը կազմում է 150.1 հազ.հա, որից 24.9 հազ. հա՝ առափնյա ցամաքային տարածքներ են: Լիճը շրջափակված է Արեգունու, Գեղամա, Վարդենիսի, Փամբակի և Սևանի լեռնաշղթաների լանջերով: Այստեղ պահպանվել են բույսերի 1600 և կենդանիների 330 տարատեսակներ:

Մարզում են գտնվում բազմաթիվ հանքավայրեր, որոնցից են ոսկու, դոլոմիտի, բազալտի, ավազի, հրաբխային տուֆի հանքավայրերը: Շահագործվող հանքավայրերից մի մասին բաժին է ընկնում երկրում արդյունահանվող հանքաքարի զգալի մասը:

2006թ.-ին **մարզի տնտեսության** հիմնական ճյուղերի տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 1.8 %,
- գյուղատնտեսություն 14.4 %,
- շինարարություն՝ 1.8 %,
- առևտուր և ծառայություններ՝ 2.1 %:

Մարզի տնտեսության առաջատար ճյուղը **գյուղատնտեսությունն** է, հատկապես հացահատիկի, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերքի արտադրությունները: ՀՀ Գեղարքունիքի մարզը թարմ ձկան հիմնական մատակարարն է:

Մարզի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը հանքագործական արդյունաբերությունն է: Կարևոր նշանակություն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքները, արտադրությունը:

Բեռնատրվորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտով:

ՄԱՆՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	449	422	417
<i>այդ թվում՝</i>			
խանութներ	186	182	166
կրպակներ	216	193	193
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	3	3	3
սպառողական ապրանքների շուկաներ	8	8	8
առևտրի այլ օբյեկտներ	36	36	47

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը		
	2004	2005	2006
Հաստատություններ, ընդամենը	201	202	200
<i>որոնցից՝</i>			
նախարարոցական պետական	43	44	45
հանրակրթական պետական դպրոցներ	129	129	128
հանրակրթական ոչ պետական դպրոցներ	1	1	-
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ մանկապատանեկանատեղծագործական կենտրոններ	16	16	16
պետական միջին մասնագիտական ուսումնական	8	8	8
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1
պետական բարձրագույն ուսումնական	1	1	1
ոչ պետական բարձրագույն ուսումնական	2	2	1

Մարզկենտրոնը Գավառ (2006թ. տարեվերջին՝ 26.0 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 98 կմ հեռավորության վրա: Քաղաքը նախկինում հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր, սակայն մի շարք խոշոր գործարանների աշխատանքների դադարեցման պատճառով արդյունաբերական արտադրանքի թողարկումն էապես կրճատվել է:

Ներկայումս քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Սևան քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 21.6 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափին: Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն շինանյութերի, քիմիական, սննդի և մեքենաշինության արդյունաբերության արտադրությունները:

Մարտունի քաղաքը (2006թ. տարեվերջին՝ 11.9 հազ. բնակիչ) գտնվում է Սևանա լճի հարավ-արևմտյան ափին (Երևանից 130 կմ հեռավորության վրա): **Տնտեսության** գլխավոր ճյուղն **արդյունաբերությունն** է, թեև վերջին տարիներին արձանագրվել է թողարկվող արտադրանքի ծավալների զգալի կրճատում:

Քաղաքի **արդյունաբերության** հիմնական ուղղությունը **մշակող արդյունաբերությունն** է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն մեքենաշինության, շինանյութերի, քիմիական և սննդի արդյունաբերության ճյուղերը:

Վարդենիս քաղաքի (2006թ. տարեվերջին՝ 12.7 հազ. բնակիչ, Երևանից 168 կմ հեռավորության վրա) առաջատար ճյուղն արդյունաբերությունն է: Ընդլայնման մեծ հեռանկարներ կան հատկապես հանքավայրերի շահագործման և գյուղատնտեսական մթերքի վերամշակման ուղղություններում:

Քաղաքի *արդյունաբերության* հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

Ճամբարակ քաղաքի (2006թ.՝ 7.4 հազ. բնակիչ) *տնտեսության առաջատար* ճյուղը և բնակչության հիմնական զբաղվածության ոլորտը գյուղատնտեսությունն է: Արդյունաբերությունը համեմատաբար թույլ է զարգացած:

Ճամբարակի տարածաշրջանում է գտնվում մարզի բնական անտառների ավելի քան 90 %-ը: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունի սննդի արդյունաբերությունը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
Գավառ	ք. Գավառ
Ճամբարակ	ք. Ճամբարակ
Մարտունի	ք. Մարտունի
Սևան	ք. Սևան
	գ. Գագարին
Վարդենիս	ք. Վարդենիս

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1 Ազատ	
2 Ախալքաձոր	
3 Ակունք	
4 Աղբերք	
5 Այգուտ	
	<ul style="list-style-type: none"> • Այգուտ • Ճապկուտ (Ձիվիխյու)
6 Այրք	
7 Անտառամեջ	
8 Աստղածոր	
9 Ավազան	
10 Արեգունի	
11 Արծվանիստ	
12 Արծվաշեն	
13 Արտանիշ	
14 Արփունք	
15 Բերդկունք	
16 Գանձակ	
17 Գեղամարակ	
18 Գեղամասար	
19 Գեղամավան	
20 Գեղարքունիք	
21 Գեղաքար	
22 Գեղիովիտ	
	<ul style="list-style-type: none"> • Գեղիովիտ • Նշխարք (Յանրդ) • Լեռնահովիտ
23 Գետիկ	
24 Դարանակ	
25 Դոմաշեն	
26 Դպրարակ	
27 Դրախտիկ	
28 Երանոս	
29 Զոլաքար	
30 Զովաբեր	
31 Թթուջուր	
32 Լանջաղբյուր	

Համայնքի անվանումը		Բնակավայրի անվանումը
33	Լիճք	
34	Լճաշեն	
35	Լճավան	
36	Լճափ	
37	Լուսակունք	
38	Խաչաղբյուր	
39	Ծակքար	
40	Ծաղկաշեն	
41	Ծաղկունք	
42	Ծափաքաղ	
43	Ծովագյուղ	
44	Ծովագարդ	
45	Ծովակ	
46	Ծովասար (նախկինում՝ Թագա գյուղ)	
47	Ծովինար	
48	Կալավան	
		<ul style="list-style-type: none"> • Կալավան • Բարեպատ
49	Կախակն	
50	Կարճաղբյուր	
51	Կարմիրգյուղ	
52	Կուք	
53	Կուտական	
		<ul style="list-style-type: none"> • Կուտական • Ջառիվեր (Աղյուխուշ)
54	Հայրավանք	
55	Չորագյուղ	
56	Չորավանք	
57	Մաղինա	
58	Մարտունի	
59	Մաքենիս	
60	Մեծ Մասրիկ	
61	Ներքին Գետաշեն	
62	Ներքին Շորժա	
63	Նորարակ	
64	Նորակերտ	
65	Նորաշեն	
66	Նորատուս	
67	Շատջրեք	
68	Շատվան	
69	Շորժա	
70	Չկալովկա	
71	Ջաղացաձոր	
72	Ջիլ	
73	Մարուխան	
74	Սեմյոնովկա	
75	Սոքք	
76	Վահան	
77	Վաղաշեն	
78	Վանևան	
79	Վարդաձոր	
80	Վարդենիկ	
81	Վարսեր	
82	Վերին Գետաշեն	
83	Վերին Շորժա	
84	Տորֆավան	
85	Տրետուք	
86	Փամբակ	
87	Փոքր Մասրիկ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐՁԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ԹԱՂԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2006թ.

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10000	4969	5031
Ծնվածներ, մարդ	126	58	69
Մահացածներ, մարդ	79	38	40
Անուանություններ	60	X	X
Անունալուծություններ	5	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	26.5	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	100	56	44
հանրակրթական	1704	832	872
երաժշտական, արվեստի, գեղարվեստի կենտրոններ	87	60	27
միջին մասնագիտական	90	56	34
բարձրագույն մասնագիտական	104	58	45
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	25269
Մարզիկներ, մարդ	64	5	59
Զբաղվածներ, մարդ	4272
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	162	126	36
բժիշկներ	14
կրտսեր բուժանձնակազմ	52
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	205	140	65
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդհանուր կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1574
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	558	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	31766
թատրոն	134
համերգ	-	-	-
թանգարան	129
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	15	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	6	X	X
միջին ծանրության	6	X	X
ծանր	4	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: